բական։ Զի ընդ այն ժամանակն իշխանքն յերկուս են բաժանել, նա երկեաւ զի մի պատճառ չարեաց լինիցի. և այնր աղագաւ ետ այդ ասացելոյդ շրջարերական։ Յետ այնորիկ մեր Նախնին Տէր Կոստանդին գրեաց ասացեալ Գրիգոր չեպիսկոպոսիդ՝ զիր բանադրանաց, որ առաւել հատու էր քան ըզերկայրի սուսեր, որ մինչեւ ի պակասել շնչոյն հատանէ. և արգելեաց զինքն զասացեալ Գրիգորն ի յեւթն խորհրդոց Սուրբ եկեղեցոյ, և կապեաց ընդ անիծուք զինքն և զիւր համախոհքն. և հրամայեաց ամենեցուն՝ որ զնա ամենեւին կարգաւոր չընդունին։ Ապա լուեալ զգլխովին չարն զոր արար, զի կամեցաւ այդ ասացեալ չեպիսկոպոսդ՝ զքաղաքացիքդ՝ զոմանս խաւճայք՝ ի թագաւորական ցասումն արկանել, և յոյժ վիրաւորեցաւ. և խորհէր թէ որպէս բնաջինջ արասցէ ըզնա այդի. և դեռ ևս ի սոյն խորհրդեան էր, նա եկն Տէր Յոհանէսս Պր. Նասրատնին որդին՝ վասն եպիսկոպոսութեան այլո վիճակի[1]. զոր իբրև ետես զսա՝ յոյժ ուրախացաւ, և ձեռնադրեաց զՏէր Յոհանէսդ՝ Լովիդ, և ամենայն վերոյ յիշեալ թէմիդ եպիսկոպոս, և առաքեաց դալ առ ձեզ։ Սակայն յետ աւուրց ինչ եկաս վաղվան մեր Նախնոյն և փոխեցաւ յաշխարհէս. և կամաւքն Աստուծոյ և ընդրութեամբ նորին՝ հաստատեցաք ի սուրբ աթոռս և մեք կաթողիկոս ամենայն Հայոց։ Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ հանդիպեցան առ մեզ երկու եղբայր ի Լովէդ, տանուտէրք, Ուամէտ և Անպէտ անուն[2]. մեք արարաք այս ասացեալ Գրիգորիդ խնամք, և գրեցաք յինքն, թէ Ե՛լ և արեկ ի յաթոռս, որ ի յաթոռոյս շնորհացն ի քեզ հասանի. նայ զմեր հրամանքն ոչ ընկալաւ, և ոչ առ մեզ եկն։ Յետ այնորիկ և մեք առաքեցաք Նվիրակ ի Լովդ. նա այդ ասացեալ չեպիսկոպոսդ՝ զմեր Նվիրակն չէր ընդունել, և՝ոչ յեկեղեցի թողել էր որ մտել էր։ Կրկին առաքեցաք զնվիրակն. նայ ի սադրելոյ նորա սպանաւ մեր Նվիրակն. և մեր գրերն առ ինքն գտեալ եղև. և երևեցաւ որ ինքն էր դարան գործել։ Եւ պատճառ մի այլ ևս գործեաց ընդդէմ կանոնաց. զի ըզմեր կընքեալ գիրն բացեալ և կարդացեալ, և ապա յայտնեաց. որ և մեծ պատժոյ արժանի է. և զայն ևս ներեցաք. և առաքեցաք զվարդան երեց Նվիրակ ի Լովդ, և կոչեցաք զինքն առ մեզ։ Նայ այաքանի ժամանակ զՔրիստոսի արեամբ գնեալ ժողովրդեանդ զպարգևքն առեալ էր, և սակաւ ինչ ի ձեր պարգեւացն տուել էր ի Նվիրակն. և յետոյ բըռնութեամբ յետ կամեցաւ առնուլ, և աղմուկ էր արարել հետ մեր Նվիրակին։ Եւ մինչ մեր Նուիրակն ի յառ ձեզ էր, նա եկն Տէր Յոհանէսս և կու գնայր յերու-

1. Այս խօսքէս և վերը Գրիգորի համար ըսածէն, թէ՝ «յայլոց վիճակ կու ձեռնարկէր», դուշակուի թէ Հայոց արեւմտեայ դաղթականաց երկիրներուն՝ Լովէն զատ ուրիշ եպիսկոպոսական աթոռք այլ կային՝ այն ժամանակ, ինչպէս ի Իուսաց նահանգս, ի Ֆիեւ, Սէրոյ, Աժտէրխան, և յԱւստրիական կայսերութեան՝ ի Թոլմաք Ունգարիոյ։ Ի ԺԶ և ԺԷ դարս յիշուին եպիսկոպոսք նա և ի Ռոմանիա, բայց այս ԺԴ դարու՝ ոչ, կամ մեզ ծանօթ չեն։

2. Ասոնց դալէն ի Սիս՝ ինչ օգուտ կամ առիթ դտաւ կաթողիկոսն, չըսեր. բայց կ'իմացուի որ նոր տեղեկութիւններ առաւ։